



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Ապրիլ 26, 1990

Մեծայարգ
Տիար Տիրան Գրանեան
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Պինկհամթըն.

Յարգելի Տիար Գրանեան,

Ստացուած են համայնքի Ծխական Ժողովի տեղեկագիրները, որոնցմէ կը տեղեկացուի թէ Դեկտեմբեր 10-ին, 1989, տեղի ունեցած է համայնքի Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի չորս անդամները:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Նշան Քէչոյեան
Կարապետ Ֆաթալ
Լուք Սարգիսեան
Բուպի Գասիտի

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ընտրութեանց քուէաթուղթերէն օրինակներ:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Խաճակ Կր. Պարսամեան

Խաճակ Կր. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ